

Սյունյաց երկիր

www.syuniacyerkir.am

ՈՒՐԲԱԹ, 9 ՕԳՈՍՏՈՍԻ 2019Թ.
№ 16 (506)

**Հայ ազադագրական
շարժման զինվորների
մեջ Մխիթար
Զորավարը, անկասկած,
ամենախոշոր դեմքն էր
Դավիթ բեկից հետո...**

Լեռ



Բանակ են գնում հասարակամ տղաները մեր

Հայրենասիրական երգերի հնչյուններն ավելում են. զորակոչ է: Հերթական: Բայց... առանձնահատուկ: Որովհետև զինվորական ծառայության մեկնող այս տղաների գիտակցությունն ուրիշ որակ ունի, հայրենասիրությունը նրանց մոտ սահմաններ չի ճանաչում: Նրանք 7-ն են, գիտակից 7 տղաներ, առանձնահատուկ 7 տղաներ: Նրանք «Ես եմ» ծրագրի մասնակիցներից են:

- Ինքն է որոշել իր ճանապարհը, իր ճակատագիրը, - ասում է նորակոչիկ Բորիկի հայրը՝ Անդրանիկ Բաղդասարյանը, - 18 տարեկան տղա է, նա լավ գիտի ընտրած իր ճանապարհի ամեն մի դետալը: Մենք էլ հարգել ենք նրա որոշումը, այլ կերպ չէինք էլ կարող տղաս հաստատական տղա է:

Բորիկն ընդունվել է Գորիսի պետական համալսարան եւ հիմա գնում է ծառայելու հայրենիքին՝ երեք տարի ժամկետով:

- Երեք տարին ի՞նչ է որ, - ասում է նա, - աչքը դեռ չբարթած՝ կանցնի եւ կթռնի տարիները: Ինձ ոչ ոք չի հուշել դառնալու այս ծրագրի շահառու: Ես ծառայության այս տարբերակն եմ ընտրել՝ դրանով իսկ հիմք ստեղծելով իմ ապագայի համար: Իսկ դա շատ կարեւոր է ծառայությունն ավարտած յուրաքանչյուր երիտասարդի համար:

«Ես եմ» ծրագրի շահառուներն իրենց ծառայությունն անց են կացնելու մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում: Ծառայությունը երեք տարի է, սակայն դրանցից 7 ամիսը զինծառայողը կանցկացնի ազատ արձակման մեջ՝ սկսած 6-րդ ամսից, երբ ստորաբաժանումը կստանձնի մարտական հերթապահությունը՝ յուրաքանչյուր ամիս ծառայելով 1 գումարած 1 գումարած 2 բանաձեռով: Այսինքն, զորակոչվելուց հետո 5 ամիս ուսումնական փուլ անցնելով՝ նա կանցնի ծառայության, որի արդյունքում 31 ամսից 7-ը կանցկացնի տանը, իսկ 24-ը՝ զորամասում եւ մարտական դիրքերում: Յուրաքանչյուր ամսում արձակուրդ գնալուց նրան կվճարվի որոշակի գումար՝ արձակուրդային ծախսերը հոգալու համար: Ծառայության ավարտին նրա հաշվին կփոխանցվի ՀՀ 5 միլիոն դրամ, որով նա կարող է սեփական բիզնես սկսել կամ ուսման վարձը վճարել կամ օգտագործել հիփոթեքային ծրագրով բնակարան ձեռք բերելու համար:

Իսկ Բորիկը որոշել է սեփական բիզնեսը սկսել ծառայությունն ավարտելուց հետո:

Յուրահատուկ այս 7 տղաները շարվում են Գորիսի զինկոմիսարիատի բակում՝ ներկայացնելով ծառայությանը իրենց ներքինը:

- Դուք գիտակցելով եք գնում հայրենիքին ծառայելու, դուք երեք տարի եք ծառայելու հայրենիքին, ցանկանում եմ, որ դուք լավ տիրապետեք ռազմական տեխնիկային, որովհետև մեր հմտությունից է կախված մեր երկրի անվտանգությունը, մեր սահմանների անխոցելիությունը: Բարով գնաք, բարով վերադառնաք, - ասում է Գորիսի զինկոմիսարիատի աշխատակից Արմեն Հարությունյանը:

Սյունիքի մարզի զինկոմ, գնդապետ Արարատ Մանուչարյանը շնորհակալություն է հայտնում տղաների ծնողներին, հարազատներին, դպրոցներին, ուսուցիչներին, համայնքներին՝ այսպիսի երիտասարդներ կրթելու-դաստիարակելու համար, երիտասարդներ, որ խիզախ են, հայրենասեր, որ միշտ ծառայելու են սահմանում: Նա մի ցանկություն ունի՝

«Սպարապետի օրը»՝ Խնձորեսկում

Օգոստոսի 5-ին Խնձորեսկում հերթական անգամ տեղի ունեցավ «Սպարապետի օրը» համաժողովրդական տոնախմբություն:

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը մասնակցեց օրվա առթիվ կազմակերպված տոնական միջոցառումներին:

Նիկոլ Փաշինյանի այցը մեկնարկեց Մխիթար Սպարապետի գերեզման այցելությամբ. նա ծաղկեպսակ դրեց Սպարապետի շիրմին եւ հարգանքի տուրք մատուցեց նրա հիշատակին: Այնուհետեւ տեղի է ունեցել առանձին զրահատանկային գումարտակի 15 զինծառայողի զինվորական երդման արարողություն, ընթերցվել է Սպարապետի խոսքը, հնչել է Հայաստանի Հանրապետության պետական օրհներգը:

ներգը:

«Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զորակոչիկներ, շնորհավորում եմ ձեզ զինվորական երդումն ընդունելու կապակցությամբ», - ողջույնի խոսքում նշել է վարչապետը, ապա անհատապես շնորհավորել զինծառայողներին, բարենադրանքներ հղել նրանց ծնողներին:

Վարչապետը նաեւ քայլել է Խնձորեսկի ճոճվող կամրջով եւ դիտել կամրջի հարակից տարածքում «Սպարապետի օրվա» առթիվ պատրաստված երաժշտական ցուցադրական ելույթները:

Նիկոլ Փաշինյանի հաջորդ կանգառը Խնձորեսկի գյուղապետարանն էր, որտեղ նրան ջերմ ծափողջույններով դիմավորել են խնձորեսկցիները: Վարչապետը զրու-

ցել է բնակիչների հետ, շնորհավորել նրանց «Սպարապետի օրվա» առթիվ: Ապա գյուղապետարանի բակում տեղի է ունեցել «Կինը կժող» շատրվանի բացման հանդիսավոր արարողությունը, ներկայացվել են ցուցադրական ելույթներ:

Վարչապետը ծաղիկներ է դրել Արցախյան պատերազմի նահատակների հուշակոթողին եւ Հայրենական մեծ պատերազմում զոհված խնձորեսկցիների հիշատակին նվիրված հուշակոթողին:

Վարչապետ Փաշինյանը նաեւ այցելել է «Սպարապետի օրվա» տոնական միջոցառումների շրջանակում անցկացվող էքսպոցուցահանդես, ծանոթացել ներկայացված արտադրանքին:

Մ-2 մայրուղու Տաշպունի խաչմերուկ-Այգեձոր հարվածը՝ ճանապարհաշինական աշխատանքների մեծ հրապարակ

Աշխատանքային այցով լինելով Մեղրիում՝ հարկ չի լինում ձեռնարկության գործերից երկար-բարակ հարցուփորձ անել Մեղրու «Ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» ՍՊ ընկերության տնօրեն Ազատ Գասպարյանին: Այս անգամ եւս անցնելով Մեղրու լեռնանցքը՝ նկատեցինք ճանապարհի մաքրված կողերները, իսկ ավելի մոտենալով Մեղրուն՝ ճանապարհի մի

զգալի հարվածում մեծածավալ աշխատանքներ էին կատարում մեղրեցի ճանապարհաշինարարները՝ բազմաթիվ տեխնիկայի օգնությամբ:

Երեւում էր, որ պայթեցումներ են կատարվել, քանզի ճամփեզրերին կուտակված էին լեռնազանգվածից պոկված մեծ քարաբեկորներ: Երբեմն ճանապարհը փակվում էր երթելու:



Ազատ Գասպարյան, Մեղրու «Ճանապարհների շինարարության եւ շահագործման ձեռնարկություն» ՍՊ ընկերության տնօրեն

Տասնամյակներ հետո դռները բացեց Մեղրու սուրբ Յովհաննես եկեղեցին (Անապատանաց վանքը)

Հուլիսի 27-ին Մեղրին ունեցավ մի գործող եկեղեցի եւս: Քայքայված վիճակից վեր հառնեց Աստծո մեկ տաճար եւս՝ Սուրբ Յովհաննես եկեղեցին կամ Անապատանաց վանքը:

2015 թվականից «Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպության նախաձեռնությամբ սկսվել էր եկեղեցու վերականգնումը, նախ կատարվել էին հնագիտական ուսումնասիրություններ, իրականացվել պեղումներ: Վերականգնման աշխատանքներին մասնակցել են ինչպես մեղրեցիներից կազմված բանվորական ջոկատը, այնպես էլ կամավորներ՝ Հայաստանից եւ արտասահմանից: Այսօր արդեն վանքը վերականգնված է, տարածքը՝ բարեկարգված: Վանքի վերականգնման շինաշխատանքների ղեկավարը եւ պատասխանատուն Արշավիր Հովհան-



նիսյանն է, տեխնիկական հսկիչը՝ Սամվել Ավետիսյանը: Հիշարժան արարողությանը մասնակցում էին Սյունյաց թեմի եկեղեցական դասը՝ Սյունյաց թեմի առաջնորդական տեղապահ Տեր Մակար վարդապետ Հակոբյանի գլխավորությամբ, «Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպության նախագահ Գեղամ Գեւորգյանը, ամերիկահայ գործարարներ Հայկ եւ Հիլդա Մանջիկյանները, գիտաշխատողներ ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտից, վանքի վերականգնման նախագծի գլխավոր ճարտարապետ Ստեփան Նալբանդյանը, հնագետներ, շինարարներ, մեղրեցիներ եւ հյուրեր: Տեսական ընդմիջումից հետո

տաճարի կամարների ներքո հնչեց տերունական աղոթքը, մատուցվեց սուրբ պատարագ: Եկեղեցու վերաբացման առիթով օրհնանքի խոսքում տեր Մակար վարդապետ Հակոբյանն անդրադարձ կատարեց Մեղրու վանքի՝ տարածաշրջանի կյանքում կատարած դերին, մասնավորապես նշելով. «Վանքի անունը ժողովուրդն անվանել է Անապատանաց, այսինքն՝ անապատով մարդկանց բերել է իր օթեւանի տակ, պահել-պահպանել է եւ մտցրել առողջ կյանք»: Սուրբ Յովհաննես եկեղեցու վերածման առթիվ Ամենայն հայոց վեհափառի՝ Տեր տեր Գարեգին երկրորդ կաթողիկոսի օրհնության գիրը հրապարակեց Արարատ եպիսկոպոս

Գալթակչյանը՝ Մայր աթոռ սուրբ Էջմիածնից: Սուրբ Յովհաննես (Անապատանաց) վանքը բավականին խոշոր է եղել, ինչը երեւում է Տաթևի վանքին հարկատու գյուղերի ցանկից, ըստ որի Մեղրիի վանքը վճարում էր 20 միավոր հարկ: Այդ մասին հիշատակում է Սյունյաց տան պատմիչ Ստեփանոս Օրբելյանը «Պատմութիւն նահանգին Սիսական» աշխատության մեջ: Վանքի մասին տեղեկություններ են հաղորդում 18-րդ դարի կաթողիկոս Աբրահամ Կրետացին, ինչպես նաև Դեւոնդ Ալիշանն իր «Սիսական» աշխատության մեջ: Ուշագրավ է, որ եկեղեցու սրահին առանձին գրավչություն են հա-



Մեծ սյունեցի Մաքսիմ Հակոբյանն օգոստոսի 8-ին կդառնար 70 տարեկան. լույս իջնի նրա շիրմին

ղորդում որմնակարները, որոնք ավելի հին են, քան Մեղրու Մեծ եւ Փոքր թաղերի եկեղեցիների որմնակարների մեծ մասը: Կատարվել են այդ որմնակարների մասնակի նորոգումներ, որ իրականացրել է Ֆրանսիայից հրավիրված մասնագետը: Վերածման արարողությունից հետո զորոյց ունեցանք վանքին երկրորդ կյանք պարգևատրված մարդկանց հետ: Հնագիտական արշավախմբի ղեկավար Արման Նալբանդյանը նշում է, որ պեղումների ընթացքում բացվեցին ոչ միայն եկեղեցու եւ գավիթ-նախասրահի, այլև մի շարք տնտեսական ու արհեստավորական սենյակների հիմքեր: Ամենահարուստ հնագիտական նյութը գտնվեց եկեղեցու հարավային ավանդատան տակ բացված գաղտնարանում, որտեղ հայտնաբերվեց

առարկաների մեջ կան բազմազան կարիքների համար նախատեսված անոթների գրեթե բոլոր տիպերը՝ սկսած փոքր աղամաններից մինչև հսկա կարասները, որոնք թվագրվում են 12-րդ դարից մինչև 18-րդ դարը: Բոլոր հնագիտական իրերը վերականգնվել են, հատուկ նյութերով մշակվել, բերվել թանգարանային տեսքի. բայց խնդիրն այն է, որ Մեղրին չունի երկրագիտական թանգարան: «Երկիր եւ մշակույթ» կազմակերպությունը զննել է վանքին հարակից շենքը, մի խոսքով՝ խնդիրը տակավին լուծման փուլում է, որում իրենց խոսքը պիտի ասեն համայնքային իշխանությունները: Ստեփան Նալբանդյանը «Սյունյաց երկրին» փոխանցեց, որ վանքը վերականգնել են այն տեսքով, ինչ պիտի լիներ, միայն որպես տանիքի ծածկանյութ օգտագործել են պղնձե թիթեղներ, որ եւ թեթեւ է, եւ ջրաթա-



Վանքի վերականգնման հովանավոր, «Երկիր եւ մշակույթ» համազգային կազմակերպության նախագահ Գեղամ Գեւորգյանը (աջից)

սրբապատկերով կտավ, ձեռագիր մատյանների, տպագիր գրքերի էջերի պատահիկներ, մետաղական բազմաթիվ առարկաներ, ջահերի, մոմակալ-աշտանակների մասեր, նաև խաչքարի բեկորներ: Իսկ ընդհանրապես վանքի պեղումներից հայտնաբերված ամենատարածված նյութը խեցեղենն է, որ երկու մասի կարելի է բաժանել՝ ջնարակված եւ անջնարակ՝ հիմնականում կապույտ եւ սպիտակ գույներով: Խեցեղեն

փանցման կանխման խնդիր է լուծում: «Ինչ վերաբերում է եկեղեցուն, ամեն ինչ արված է, բայց տարածքում ուսումնասիրման աշխատանքները շարունակվելու են, մեր հնագետները դեռ 20 օր մնալու են, պեղումները դեռ պիտի շարունակվեն: Պիտի փորձենք հնարավորինս մաքրել, կոնսերվացնել այդ հնագիտական տարածքը», - տեղեկացրեց Ստեփան Նալբանդյանը:

ՎԱՐՄԱՍ ՕՐԲԵԼՅԱՆ

Արծրուն Ալեքսանյան. «Քաջարանի հեղանակաբանների հուշեր են կապված»

Հարցազրույց գրող, հրապարակախոս, պատմական գիտությունների թեկնածու Արծրուն Ալեքսանյանի հետ:



— Հարգելի պարոն Ալեքսանյան, դառը մանկություն ու պատանեկություն եք ունեցել, դրա հիշեցնելը վերջի վրա աղ լցնելու նման բան է, բայց, այնուամենայնիվ, մի բանի խոսք Ձեր կյանքի վաղ շրջանի մասին:
— Մանկությունս անցել է որբության մեջ, հայրս՝ Հովակիմը, կրտսեր եղբայրն էր զորական Տաճատ Հովակիմյանի՝ Սարգսրապատի ճակատամարտի լեգենդար հերոսի, ով զոհվեց Ղարսի հանձնման օրերին: Որպես դաշնակցականի՝ ժողովրդի թշնամու, հայրս հալածվել է, կրել քսորի դառնությունները, այնուհետև մեկնել Հայրենական մեծ պատերազմ, 1944-ին Նովոռոսիյսկում զոհվել է, երբ դեռ հազիվ էր բուրդել 38 տարին:

այցեխոս

Հալածանքների քիչ բաժին չի ընկել մեր ընտանիքին: Մինչև 1954-1955 թթ. եղել ենք անօգնական վիճակում: Կյանքին անժամանակ հրաժեշտ տվեց նաև մայրս՝ 34 տարեկանում: Մահվան պատճառ դարձավ մալարիան: Մեծացել եմ կոլտնտեսության գառ ու հորթեր պահելով: Յոթերորդ դասարանում աշխատել եմ, լուսանկարչական ապարատ գնել, դարձել լուսանկարիչ: Իններորդ դասարանից Աշտարակի տեղադրված կոմբինատում լուսանկարիչ էի: Տասներորդն ավարտելուց հետո ուսումնառությունս շարունակեցի Երեւանի պետական համալսարանի ժուռնալիստիկայի ֆակուլտետի երեկոյան բաժնում՝ միաժամանակ զբաղվելով լուսանկարչությամբ: Երեք տարի ծառայել եմ խորհրդային բանակում: 1961-65թթ. սովորել եմ Երեւանի պետական մանկավարժական ինստիտուտի պատմա-բանասիրական ֆակուլտետում: Մանկավարժական աշխատանք է կատարել Երեւանի ռադիոկայանի տեխնիկումում, Քաջարանի շինարարական տեխնիկումում, 1971 թ. եղել է Երեւանի Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական ինստիտուտի ասպիրանտը, գրել է թեկնածուական թեզ՝ «Չանգեզուրի հարավային շրջանի արդյունաբերության զարգացման պատմությունը» թեմայով: Աշխատել է Քաջարանի թիվ 2 դպրոցում՝ փոխտնօրեն, ապա՝ մշակույթի պալատի տնօրեն: Դասախոսել է Կապանի, Երեւանի, Աշտարակի բուհերում եւ միջնակարգ ուսումնական հաստատություններում, աշխատել Սարգսրապատի բանգարանում, ՀՀ ԳԱ ազգագրության եւ հնագիտության ինստիտուտում: Թեմատիկ առումով ընդգրկում է նրա ստեղծագործական ոլորտը, գրում է այն ամենի մասին, ինչ իրեն

հուզում ու մտահոգում է: Պատմագրի նախասիրություններից է նաև լրագրողական աշխատանքը, որն էլ կատարում է ներքին մոլոնով եւ քաղաքացիական պարտքի արթուն զգացումով: Արժանացել է ԽՍՀՄ եւ հանրապետության նախարարությունների, մանկավարժական գիտահետազոտական ինստիտուտների, հանրապետության մանկավարժական ընկերության պատվոգրերի, մրցանակների, «Ժողովրդական գեղագետ» եւ «Ավագ» մանկավարժի կոչման ու մի շարք մեդալների:

Ընթերցողների վկայությամբ՝ առանձնապես հետաքրքրությամբ են ընթերցվում հայ ժողովրդի պատմության տարբեր շրջանների ազգային - ազատագրական գոյամարտի, լուսավորության երախտավորների մասին նրա հոդվածներն ու ակնարկները:

1978-ից պատմական գիտությունների թեկնածու է, դոցենտ:

2008 թվականից մեկնեց Ամերիկա, գրեց «Կալիֆոռնիայի հայերը Երկրորդ համաշխարհային պատերազմում» ստվարածավալ աշխատությունը:

Ներկայումս Արծրուն Ալեքսանյանն ապրում է Կալիֆոռնիայի Լոս-Անջելես քաղաքում, Հայաստանի եւ Կալիֆոռնիայի հայ գրողների միության անդամ է, ակտիվորեն մասնակցում է այդտեղի գրական-մշակութային, հասարակական կյանքին:

«Արծրունը մշակույթին ու արվեստին մոտիկ կանգնած հրաշալի երիտասարդ է, ուսանողները լսում են նրա ճիշտ ու գրագետ վերլուծությունները»: Ես նույնպես լսում էի նրան, հիանում պատկերավոր լեզվով ու բացատրություններով: Տեխնիկումի տնօրենը հանրապետության լուսավորության նախարարի հետ նստած՝ գրուցում էին: Հաջորդ օրն ինձ տնօրենը կանչեց, լուսավորության նախարարն էլ էր այնտեղ, վերջինս սասց. «Արծրուն ջան, հատուկ եկել եմ՝ մի բան առաջարկելու: Գործուղենք թեզ Կապան՝ մանկավարժական աշխատանք կատարես երկու տարի, հետո կգաս ինձ մոտ»: Գնացի եւ մնացի: Կոմբինատն ամբողջովին նոր էր: Դա 1968 թվականին էր, երբ մշվում էր Երեւանի-Երեւանի 2750-ամյակը: Ինձ տարան դասախոսության: Հավաքվել էին կոմբինատի ղեկա-

վարները, ինձ ներառեցին ղեկավարման մասին: Երեւանի պատմությունը՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Այդպես սկսեցի դասերից հետո բանավորական միջավայրում, մշակույթի պալատում դասախոսություններ կարդալ գրականության, պատմության վերաբերյալ: Եվ մի օր էլ ինձ նշանակեցին մշակույթի պալատի տնօրեն: Դասախոսություններով հանդես էի գալիս եւ հոդվածներ տպագրում շրջամային «Պղնձի համար» թերթում երեւելի հանքագործների, արտադրության ղեկավարների մասին: Հետո ինձ ընտրեցին ճամբարի ավագ ջոկատավար, 500 դպրոցական էր հանգստանում՝ երեք հեթափոխով, դեռ ճամբարի շենքը կառուցված չէր: Երեխաները վրանների տակ էին տեղավորված: Հետաքրքրական ժամանակներ էին, Վահանավանքում պեղումներ

Ֆրունզե Պետրոսյան: Կուտակված փաստական հարուստ նյութը նպաստեց, որ շարադրեն Քաջարանի արդյունաբերության զարգացման պատմությունը: Եվ այդպես ծնվեց թեկնածուական իմ թեզը՝ «Չանգեզուրի հարավային շրջանի եւ արդյունաբերության զարգացման պատմությունը» թեմայով, որն ընդգրկում էր 1945-1985 թվականները: Այդ ընթացքում հիշարժան շատ դեպքեր են եղել: Անաստաս Միկոյանն է եկել Քաջարան, Վիլյան Սարոյանը, այլ նշանավոր մարդիկ: Ուսումնասիրության մեջ արտացոլված են ոչ միայն կոմբինատի գործունեությունը, այլև «Քաջարանին» տրեստի շինարարական աշխատանքները:

— Մեկուկես տասնյակից ավելի գրքեր եք հեղինակել, կիսնորդներ կապագաները Ձեր գրահրատարակչական գործունեությունը:

— Ամենածավալուն գիրքը «Կալիֆոռնիայի հայերը երկրորդ համաշխարհային եւ Արցախյան պատերազմներում» աշխատությունն է, որում լուսաբանվում է 1915 թվականի ցեղասպանությունից փրկված, Կալիֆոռնիայի նահանգում վերապրած հայերի հերոսական մասնակցությունն Ամերիկյան բանակի՝ ընդդեմ Ճապոնագերմանական զավթիչների գործողությունների: Գրքում ընդգրկված են Ամերիկայում ապրող՝ Երկրորդ համաշխարհային պատերազմի եւ Արցախյան գոյամարտի մասնակիցների, ինչպես եւ Ամերիկյան բանակում երկրի պաշտպանությանը նպաստ բերած երիտասարդության ծառայության մասին դրվագներ: Զրույցներ են ունեցել պատերազմի վետերանների հետ, 1997 թ., երբ սկսեցի գիրքը գրել: Այդ ժամանակ Կալիֆոռնիայում՝ բուն Գլենդելում, 180 վետերան էր ապրում, մի մասը տեղացիներ էին եւ ինտեգրված էին բուն Ամերիկայի բանակի գործիչների հետ: Առաջաբանը գրել եմ շատ ծավալուն՝ շուրջ 40-50 էջ, ընդգրկված են Ամերիկյան, Նոթսիի՝ Ֆրեզնոյում գտնվելու մասին դրվագներ, նրանց հասարակական աշխատանքները: Նրանք Կալիֆոռնիայի նահանգում, Ֆրանցիսկոյում, Ֆրեզնոյում ու Սակրամենտոյում մեծ գործունեություն են ծավալել:

Երբ հանդիպումներ եղան Գլենդելի Սուրբ Աստվածածին եկեղեցում, ես հանդես եկա վետերանների ժողովում, ներկայացրի նպատակ, ցանկացողներ շատ եղան, որ հուշերով հանդես կգան, այդ թվում՝ դժվարին, բայց փառահեղ մի կյանք ապրած երկվորյակներ՝ մեկը՝ գնդապետ, մյուսը՝ տնտեսագիտության դոկտոր, Մաքսիմ եւ Վլադիմիր Հակոբյան եղբայրները: Եվ մշտապես նրանց հետ շփվելով՝ առատ փաստագրական նյութ հավաքվեց, որոնց օգտագործմամբ ընթերցողի սեղանին դրվեց «Դժվարին, բայց փառահեղ մի կյանք» մենագրությունը: Իմ հաջորդ գիրքը՝ «Կյանք, որ նման է լեգենդի», Թամանյան դիվիզիայի անցած հերոսական ուղու եւ նրա ավագ բուժքույր Ելիզավետա Կարապետյանի մասին է: «Սարգսրապատի մահապարտը» գիրքս մահապարտների գունարտակի հրամանատար Տաճատ Հովակիմյանի սխրանքների մասին է: Ավելի վաղ հրատարակել էի բանաստեղծական գրքեր՝ «Գարնանային օրեր» եւ «Սրտիս ճամփան» խորագրերով: Վերջին գիրքս վերաբերում է Չանգեզուրի լեռնային գյուղերից մեկին՝ Լեռնածորի աշխատավոր մարդկանց ու գյուղի պատմությանը:

— Նաեւ հայտնի է, որ Ձեր կյանքում հանդիպումներ եք ունեցել Պարոյր Սեւակի, Շիրազի, Սահյանի, Երեւելի այլ մարդկանց հետ: Սեւակի հետ հանդիպումից մի դրվագ առանձին ներկայաց-

Նրա սպեղծարար ներկայությունն առավել պահանջված է դառնում Սյունիքի կրթական համակարգում

Լեռնիկ Պետրոսյանը 60 տարեկան է:

Ծնվել է 1959 թ. օգոստոսի 10-ին Ղափանի շրջանի Վերին Խոփանան գյուղում մանկավարժների ընտանիքում: Սկզբնական կրթությունը ստացել է գյուղի 8-ամյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Ղափանի N7 միջնակարգ դպրոցում, որն էլ բարձր առաջադիմությամբ ավարտել է 1976 թ.: Նույն թվականին ընդունվել է Երեւանի պետական համալսարանի ֆիզիկայի ֆակուլտետը և 1981 թ. գերազանց առաջադիմությամբ ավարտել այն:



Աշխատանքային կենսագրությունը սկսել է Երեւանի պոլիտեխնիկական ինստիտուտի ֆիզիկայի ամբիոնում՝ երկու տարի աշխատելով կրտսեր գիտաշխատող, որից հետո՝ 1983 թվականին, տեղափոխվել Կապան եւ աշխատանքի անցել կրթական համակարգում: Սկսել է ուսուցչությունից, այնուհետև՝ տարբեր ժամանակներում, աշխատել կրթության բնագավառի գրեթե բոլոր պաշտոններում. ժողկրթբաժնի մեթոդիստ (1983 - 86 թթ.), Կապանի թիվ 6 միջն. դպրոցի ուսնավար (1986 - 87 թթ.), նույն դպրոցի տնօրեն (1988 - 1996 թթ.), Սյունիքի մարզպետարանի կրթության բաժնի գլխավոր մասնագետ (1996 - 97 թթ.), ՀՀ ԿԳ նախարարության Սյունիքի մարզային տեսչության պետ (1997-98 թթ.), Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետի տեղակալ (1998

- 2000 թթ.), Խ. Աբովյանի անվան ՀՀԿԿ Կապանի հեռակետային վարժարանի տնօրեն (2000 - 2003 թթ.), Սյունիքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի եւ սպորտի վարչության պետ (2003 - 2006 թթ.), Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Կապանի քոլեջի (ներկայումս մասնաճյուղի) տնօրեն (2005 - 2006 թթ.), Կապանի վարժարանի (հետագայում՝ թիվ 2 ավագ դպրոցի) տնօրեն (2007-2012 թթ.), ՀՀԿԿ (ներկայումս ՀԱՊՀ) Կա-

պանի մասնաճյուղի տնօրեն (2012 - 2016 թթ.): Ներկայումս պրոֆեսորի հաստիքով աշխատում է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի մաթեմատիկայի եւ բնագիտական առարկաների ամբիոնում: Հիմնական աշխատանքին զուգահեռ տարբեր հանրակրթական եւ բուհական հաստատություններում համատեղությամբ կատարել է մանկավարժական ու դասախոսական աշխատանք: Վերը նշված կրթական հաս-

տատություններից երկուսը՝ ՀՀԿԿ Կապանի հեռակետային վարժարանը, որի բազայի վրա հետագայում ստեղծվել է Կապանի վարժարանը (վերակազմակերպման արդյունքում հիմնադրվել է Կապանի թիվ 2 ավագ դպրոցը), եւ Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Կապանի քոլեջը հիմնադրվել են Լեռնիկ Պետրոսյանի անմիջական նախաձեռնությամբ: Աշխատանքային գործունեությանը համատեղ ակտիվ զբաղվել է գիտական աշխատանքով: Հեղինակ է շուրջ յոթ տասնյակի հասնող գիտական ու գիտամեթոդական հոդվածների, երկու դասագրքի (երաշխավորված ՀՀ ԿԳ նախարարության կողմից) եւ երկու ձեռնարկի:

1999 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, ստացել մանկավարժական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2008 թ. պաշտպանել է դոկտորական ատենախոսություն եւ ստացել մանկավարժական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: 2008 թ. նրան շնորհվել է դոցենտի, իսկ 2012 թվականին՝ պրոֆեսորի գիտական կոչում:

Լեռնիկ Պետրոսյանն ամենուր աշխատել է եռանդով ու նվիրումով: 1990-ական թվականների հայադրեջանական շիայտարարված պատերազմի ժամանակ տարիներին, լինելով Կապանի թիվ 6 միջն. դպրոցի տնօրեն, կարողացել է պատշաճ մակարդակով կազմակերպել դպրոցի աշխատանքները, դրա հետ միասին դպրոցի նկուղային հարկում ստեղծել լրացուցիչ մուտքեր, լրասավորության եւ օդափոխության ցանցեր, մոտ հազար տեղանոց ապաստարան, որը դպրոցի անձնակազմին, իսկ շատ դեպքերում նաեւ դպրոցի շրջակա շենքերի բնակիչներին պաշտպանել է թշնամու հրետակոծությունից եւ ռմբակոծությունից:

Նրա գլխավորությամբ դպրոցի կոլեկտիվին իր նյութական օժանդակությունն է ցուցաբերել սահմանում կռվող ազատամարտիկներին եւ հիվանդանոցում բուժվող վիրավորներին: Մարզպետարանի կրթության

վարչությունը ղեկավարելու տարիներին մարզային կրթական կառույցների ուսումնական ցուցանիշների մակարդակը միշտ եղել է հանրապետությունում լավագույններից մեկը:

ՀՀԿԿ Կապանի հեռակետային եւ Կապանի վարժարանները նրա տնօրինության ժամանակ իրենց կրթական ու օլիմպիական ցուցանիշներով եղել են հանրապետության ամենաառաջնակարգ հանրակրթական հաստատությունների շարքում: Նույնիսկ եղել են տարիներ, երբ այդ հաստատությունները դպրոցականների հանրապետական օլիմպիադայի հանրապետական փուլից Սյունիքի մարզ բերել են ավելի շատ դիպլոմներ ու գովասանագրեր, քան Սյունիքի մարզի մնացած 122 դպրոցը միասին վերցրած:

2012 թ. փետրվարից Լեռնիկ Պետրոսյանը նշանակվել է ՀՀԿԿ (վերակազմակերպումից հետո՝ ՀԱՊՀ) Կապանի մասնաճյուղի տնօրեն եւ այդ պաշտոնում աշխատել չորս տարի 10 ամիս՝ մինչեւ 2016 թ. դեկտեմբերի 8-ը:

Շարունակելով մասնաճյուղում նախկինում իրականացված նպատակային աշխատանքները՝ մի նոր թափ է հաղորդել այդ աշխատանքներին: Նրա ղեկավարությամբ մասնաճյուղում տարբեր ծրագրերով (այդ թվում նաեւ միջազգային) ստեղծվել են հինգ ժամանակակից նոր լաբորատորիա եւ մեկ հեռավար ուսուցման կենտրոն:

Որակապես նոր մակարդակով հիմնանորոգվեց գլխավոր մասնաշենքի առաջին հարկում գտնվող գրադարան - ընթերցասրահը, որը նոր գույքով եւ սարքավորումներով համալրվելուց հետո դարձավ ժամանակակից պահանջներին լիովին համապատասխանող ընթերցասրահ:

Մասնաշենքերում իրականացվեցին մի շարք ուսումնական եւ վարչական սենյակների վերանորոգման աշխատանքներ. վերանորոգվելուց եւ նոր գույքով կահավորվելուց հետո ստեղծվեց կյանքից անժամանակ հեռացած Վաչե Եփրեմյանի անվան լսարանը (բանասիրական գիտությունների դոկտոր, մասնաճյուղի ղեկան): Վերանորոգվեց եւ 2012 թ. սեպտեմբերից վերագոր-

Մանկավարժությանը եւ գիտությանը ծառայելը նրա առաքելությունն է

Լրանում է գիտության եւ մանկավարժության երախտավոր, կրթության բնագավառի պրոֆեսիոնալ կազմակերպիչ, հայրենի բնաշխարհի նվիրյալ Լեռնիկ Պետրոսյանի ծննդյան 60-ամյակը, եւ ակամայից հիշում են ռուսական հայրենի ասացվածքը. «Часы идут, дни бегут, а годы летят»: Եվ իրոք, ճանաչելով պրոֆեսոր Պետրոսյանին, տեսնելով նրա արարելու, պրպրելու, հայրենաբերելու եւ իրագործելու անսպառ եռանդն ու աննկուն կամքը՝ դժվար է պարկերացնել, որ բոլորում է այդ սպեղծագործ մարդու վեցերորդ փաստամյակը:



Վերին Խոփանան. Լեռնիկ Պետրոսյանի ծննդավայրը

Լեռնիկ Պետրոսյանը գերազանց ավարտելով ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետը՝ 1983 թվականից իր գործունեությունն է ծավալել նախ Կապանի տարածաշրջանի, այնուհետև՝ մարզի ձեռավորումից հետո, Սյունիքի մարզի կրթական համակարգում՝ սկսելով իր աշխատանքն ուսուցչի պաշտոնից ու այնուհետև տարբեր տարիներ աշխատել մարզի հանրակրթական եւ բուհական համակարգի մի շարք ղեկավար պաշտոններում: Իր աշխատանքով եւ գիտական գործունեությամբ

- Գրիշա Սմբարյան**
Կապանի երկրագիտական թանգարանի տնօրեն, մշակույթի վաստակավոր գործիչ
- Արսեն Գրիգորյան**
Սյունիքի մարզպետարանի գորահավաքային նախապատրաստության բաժնի պետ

- Արթուր Սարգսյան**
Եվրոպական տարածաշրջանային ակադեմիայի Կապանի մասնաճյուղի տնօրենի տեղակալ, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ
- Արամ Գրիգորյան**
ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի

- ծրագրամեթոդական աշխատանքների եւ կրթության կազմակերպման բաժնի պետ, տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
- Արարատ Լալաբեկյան**
կրթության եւ գիտության աշխատողների արհմիության Գորիսի տարածքային միության նախագահ

- Խաչիկ Խեչումյան**
կրթության եւ գիտության աշխատողների արհմիության Սիսիանի տարածքային միության նախագահ
- Հովիվ Ալեքսանյան**
Սիսիանի N 5 հիմնական դպրոցի տնօրեն



Բանակ են գնում հասարակամ փղաները մեր

Եջ 1 | Երկու տղաները զենքով կրակեն միմիայն գորավարժությունների ժամանակ, ուսումնական կենտրոններում: Այսինքն, տա Աստված, որ երկիրը խաղաղ լինի:

Տղաները ու նրանց հարազատներն ուղեւորվելուց առաջ գնում են Գորիսի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ եկեղեցի՝ մոմավառության, Աստծո հետ մեկ անգամ եւս հաղորդակցվելու: Եկեղեցուն աղոթք է, աղոթքից բացի Գորիսի տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Ահարոն քահանա Մելքոնյանն ասում է.

– Դայրենիքին ծառայելը յուրաքանչյուր հայի պարտքն է: Ես էլ եմ ծառայել բանակում, այն էլ՝ պատերազմի ժամանակ: Յուրաքանչյուր հայ տղամարդ պիտի սահման պահի, որ բռնամիտ չհասնի մեր տունը: Եթե մի մարդ գիշերը չի հերթապահել, նա հայրենիքի արժեքը չի իմանա: Եվ ահա այսօր դուք գնում եք ծառայության՝ այդ արժեքի ամբողջ իմաստը ճիշտ ընկալելու համար: Դուք ոչ միայն ձեր ներդրումն եք ունենալու հայոց բանակաշինության գործում, այլև ձեր ապագայի համար եք գնում ծառայելու: Կվերադառնաք տուն, կղնեք ձեր բիզնեսը եւ դուք դրանով էլ ձեր նպաստը կբերեք հայրենիքի տնտեսական զարգացման գործում, այսինքն, կգործեք դարձյալ ի նպաստ մեր ժողովրդի:

Եվ աղոթք է, եւ մոմավառություն, եւ... Ասված ու չասված բազում խոսքեր այս 7 տղաների հասցեին:

Յոթը լավ թիվ է, հաջողության թիվ է՝ կողքից ասում է մի կին: Ուրեմն՝ տղաները բարով-խերով տուն կդառնան:

Եկեղեցու դիմացի փողոցում կանգնած մեքենան տղաներին է սպասում: Նրանք կրկին ու կրկին ողջագուրվում են հարազատների հետ: Ու կրկին ու կրկին ողջերթի խոսքեր, բարի ծառայության մաղթանքներ՝ ոչ միայն ծնողներից, այլև ընկերներից, բանակից արդեն զորացրվածներից:

– Տղաներ, միշտ եղեք միասնական, իրար թե ու թիկունք, միասնության արժեքը ես զգացել եմ ծառայության ժամանակ, - ասում է մի երիտասարդ, - ձեր միասնությունն ամենահզոր զենքն է:

Նորակոչիկները տեղավորվում են մեքենայում:

Փողոցում հավաքվածները հուժկու ծափերով ճանապարհում են նրանց...

Ալվարո Մետրոպոլ

Հուլիսի 27-ին Շաքեի ջրվեժի հարակից փարածքում փռվելի ունեցավ ազնվամորու փառապոն



Սյունյաց Երկիր | www.syuniacyerkir.am | www.facebook.com/SyuniacYerkirNewspaper/

Հիմնադիր ԵՎ ՀՐԱՏԱՐԱՎԿԻՉ «ՍՅՈՒՆՅԱՑ ԱՇԽԱՐՀ» ՍԱՀՄԱՆԱՓՈՎԱ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագիր՝ **ՍԱՍՎԵԼ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ**

Հասցե՝ Կապան, Շահումյան 20/32: Գրք.՝ (0285) 5 25 63, (091) 45 90 47, (077) 45 90 47: Էլ. փոստ՝ syuniacyerkir@mail.ru Էլ. կայք՝ www.syuniacyerkir.am

Ռճառի տակ տպագրվում են գովազդային նյութեր:

Մ-2 մայրուղու Տաշիրուևի խաչմերուկ-Այգեձոր հատվածը՝ ճանապարհաշինական աշխատանքների մեծ հրապարակ



Կող տրանսպորտային միջոցների համար, քանզի էքսկավատորը պիտի բեռներ հեթական բեռնատարին:

Յետո տեղեկացանք, որ հուլիսի 11-ին ՀՀ տրամաքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարության հայտարարած Մ-2 միջալեռական ճանապարհի մոտ 9 կմ 600 մ ճանապարհահատվածի նորոգման-վերակառուցման նրջույթի հաղթող է ճանաչվել Մեղրու «ՃՇՇՁ» ՍՊ ընկերությունը: Մեղրեցի ճանապարհաշինարարներն ամբիջպես ձեռնամուխ են եղել շինարարությանը, քանզի տեղանքը բարդ է, ժամանակը՝ կարճ: Շինարարության ավարտ է սահմանված նոյեմբերի 15-ը:

Ճանապարհի ասֆալտբետոնի ծածկի լանդթյունը լինելու է 6 մ 60 սմ (նախկին 6-ի փոխարեն): Վերանորոգվող ճանապարհահատվածի կողմակները եւս նախկինից ավելի լայն են լինելու՝ 1.5 մետր (մինչ այդ մեկ մետր է եղել): Մի խոսքով՝ ճանապարհի երթևեկելի զոտու լայնությունը լինելու է մոտ 9 մետր, ինչը հնարավորություն է տալու, որ տրանսպորտային միջոցները մի հետքով չերթան: Ըստ Ազատ Գասարյանի՝ ճանապարհն ու է «ալիքավորվելու», բայց գերբեռնված եւ ծանրաքաշ մեքենաների երթևեկության պարագայում, ինչպիսի ճանապարհ էլ կառուցեն, այն այնքան էլ երկար կյանք չի ունենալու: «Ուր տոննա բեռնատարողությամբ «Կամազը» բարձուն են 20-25 տոննա, ինչպե՞ս կարող է ճանապարհը մնալ իր նախկին տեսքին: Եթե ուշադրություն եք դարձրել, Մեղրուց սկսվող Մ-2 միջալեռական ճանապարհն արդեն «ծերացել է», կծկվել, դա հենց ծանրաքաշ եւ գերբեռնված մեքենաների երթևեկության հետեւանքով է, շուտով անցած տարում նորոգած ճանապարհն էլ է հասնելու այդ վիճակին, եթե այսպես շարունակվի», - մտահոգություն է հայտնում մեր գրուցակիցը:

– Իսկ հնարավոր չէ, որ ծանրաքաշ մեքենաները երթևեկեն Մեղրի-Շավ-Կապան այլընտրանքային ճանապարհով, - հետաքրքրվում ենք, - այդպիսով այդ հսկա բեռնատարները մուտք չեն գործի Կապան՝ կաթվածահար անելով մարզկենտրոնի երթևեկությունը:

– Ամեն ինչ հնարավոր է, բայց չեն երթևեկում, նշված ճանապարհը 21 կիլոմետրով երկար է, նաեւ ավելի ցածր գոտիով է անցնում, ուստի ամենուրեք ավելի շոգ է, բացի այդ՝ վարորդների աչքը սովորել է Կապան-Քաջարան-Մեղրի ճանապարհին, - պատասխանում է վաստակաշատ ճանապարհաշինարարը:

– Այնուամենայնիվ, ո՞րն է ելքը, - համառում ենք:

– Նախ՝ արգելել գերբեռնված մեքենաների երթևեկությունը, իսկ համեմատաբար շատ բեռն-

ված տրանսպորտային միջոցների երթևեկությունը թույլ չտալ շոգ եղանակին, այլ միայն գիշերը, - եղավ պատասխանը:

Ազատ Գասարյանը տեղեկացնում է, որ ձգտում են վերակառուցվող ճանապարհահատվածը համապատասխանեցնել երրորդ կարգի ճանապարհին առաջադրվող պահանջներին: Դրանով լուծած կլինեն իրենց առջեւ դրված խնդիրը: Նաեւ հավելում, որ աշխատուժի եւ շինարարական նյութերի պահանջ չունեն, մնան հարցերը վաղուց լուծված են, միայն ջանում են աշխատանքներում ավելի հզոր տեխնիկա ներգրավել, որ ճանապարհահատվածի նորոգման նախանշված ժամկետի մեջ տեղավորվեն:

Հանդիպելով մեղրեցի ճանապարհաշինարարներին՝ հաճելի մի իրողության ակամատես եղանք: Նրանք ընդմիջման սեղանի շուրջ շնորհավորում եւ քաջառողջություն էին մաղթում իրենց ավագ գործընկերոջը՝ երկարամյա մեխանիզատոր հաշիկ Ալոյսյանին, ում աշխատանքային գործունեության 25 տարն էր լրացել, որպես ճանապարհաշինարար: Վերջինս արժանացել էր «Եվրասիական պետությունների միության պատվավոր քաղաքացի» կոչման, իսկ մի քանի առավել երիտասարդ ճանապարհաշինարարներ ներկայացվել են շնորհակալագրի:

ՎԱՀՐԱՍ ՕՐԵԼՅԱՆ

Վայսարություն	Կոսմետոլոգիայի հիմունքներ	Շնորհակալություն
«Կապանի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին անհրաժեշտ են բարձրագույն կրթությամբ հիմնական աշխատակիցներ 2019-2020 ուսումնական տարում ներքոնշյալ առարկաների դասավանդման համար.	7. Հայոց պատմություն	Խորին շնորհակալություն եմ հայտնում Գրիշա Փարսյանին, ով բարի կամեցողությամբ ֆինանսական օգնություն տրամադրեց մեր հարգելի հարեւան Դավիթ Ահարոնյանի վիրահատությունը մայրաքաղաքում կատարելու համար:
1. Բուժական կոսմետոլոգիա	8. Հասարակագիտություն	Անահիտ Ամիրջանյան
2. Ֆիզդաստիարակություն	9. Աշխարհագրություն	
3. Մաթեմատիկա	10. Լատիներեն լեզու	
4. Ֆիզիկա	11. Ընդհանուր բժշկական հոգեբանության հիմունքներ	
5. Քաղաքագիտություն եւ սոցիոլոգիայի հիմունքներ	12. Գունանկար եւ գծանկար:	
6. Ֆիզիոթերապիայի եւ գործիքային		

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 5-25-70 կամ 093 97 24 92 հեռախոսահամարներով կամ այցելել Կապանի պետական բժշկական քոլեջ, հասցե՝ ք. Կապան, Շահումյան 37Ա:

Գրանցման վկայականը՝ 01Մ 000231: Թերթը տպագրվում է «Տիգրան Մեծ» հրատարակչության տպարանում: Հասցեն՝ ք. Երեւան, Արշակունյաց 2:

«ԳՈՎԱԶԳ - ԾԱՆՈՒՅՈՒՄ» բաժնուն տպագրվող նյութերի համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

Ծավալ՝ 2 տպագրական մամուլ: Տպաքանակ՝ 1200, գինը՝ 100 դրամ: Ստորագրված է տպագրության 23.07.2019թ.: